ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ-ի դեկտեմբերի 11-ից մինչև 14-ը Էստոնիայի Հանրապետության Տալլին քաղաք կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**
   Աշոտ Գիլոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Էստոնիայի Հանրապետություն, Տալլին քաղաք, դեկտեմբերի 11-ից մինչև 14-ը:

   Հրավիրող կողմը.
   «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպություն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Ծանոթանալ Էստոնիայի լավագույն փորձին պետական-մասնավոր համագործակցության, ծառայությունների մատուցման և ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրման ոլորտում:

5. **Քննարկված թեմաները.**
   Ուսումնասիրվել է Էստոնիայի սոցիալական ծառայությունների համակարգի ընդհանուր նկարագիրը և առաջընթացը, սոցիալական ծառայությունների զարգացման, ծառայությունների ապակենտրոնացման և համայնքահեն խնամքին անցման գործընթացը:
   Ուսումնասիրվել է ապաինստիտուցիոնալացման գործընթացը և դրա ազդեցությունը ծառայությունների որակի և հասանելիության բարելավման վրա:
   Ծանոթացել ենք Էստոնիայի սոցիալական ծառայությունների թվային համակարգին և դրա ինտեգրմանը ապակենտրոնացված ծառայությունների մատուցման մեջ, տեղական ինքնակառավարման և սոցիալական ծառայությունների ֆինանսավորման մեխանիզմներին:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Այց Տալլինի քաղաքապետարանի Սոցիալական բարեկեցության բաժին, որի շրջանակներում ուսումնասիրվել են սոցիալական ծառայությունների ֆինանսավորման մեխանիզմները:
- Այց Էստոնիայի ոչ առևտրային կազմակերպությունների ցանց, որի շրջանակներում ուսումնասիրվել են ծառայությունների մատուցման և քաղաքականության բարեփոխման ոլորտներում Էստոնիայի լավագույն փորձը:
- Այց Էստոնիայի տնտեսական հարցերի և հաղորդակցության նախարարություն, որի շրջանակներում ներկայացվել է թվայնացման ռազմավարությունը և կարևորությունը սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացում:
- Այց Տալլինի սոցիալական աշխատանքի կենտրոն, որի շրջանակներում ներկայացվել է հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցներին, փախստականներին և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչներին մատուցվող մատուցվող ծառայությունները, խնամքի մոդելները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Չկան:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Այցելության ընթացքում ձեռք բերված գիտելիքները և փորձառությունները կիրառել << համայնքներում:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

16.12.2024թ.